ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«20» մայիսի 2022 թվականի N:265-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԲԵՐԴԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԶԱՐԻՇԱՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԶՈՐԱԿԵՐՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի N 193-Ա ՈՐՈՇՈՒՄԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի N234-Ա ՈՐՈՇՈՒՄԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի N 268-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 32-րդ և 46-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանի 1-ին կետով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 4-րդ կետի, 5-րդ կետի 2-րդ ենթակետի, 6-րդ կետի, 7-րդ կետի, 9-րդ կետի 2-րդ ենթակետի, 11-րդ կետի, 12-րդ կետի, 16-րդ կետի, 19-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի

Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի ապրիլի 25-ի N 01/09.3/9195-2022 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի 2022 թվականի փետրվարի 2-ի N 0-25/050-2022 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բերդաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2021 թվականի ապրիլի 6-ի N 5 նիստի արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բերդաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2021 թվականի հոկտեմբերի 25-ի N 2 նիստի արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Զարիշատի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 23-ի N 102 նիստի արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Զարիշատի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 23-ի N 25 նիստի արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Զորակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 24-ի N 13 նիստի արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Զորակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2022 թվականի մարտի 15-ի նիստի N 2 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել.

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բերդաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի.

ա. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված անդամ Վարդանուշ Բադիշյանի լիազորությունները,

բ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամներ Լիլիթ Գորգինյանի և Մկրտիչ Ասատրյանի լիազորությունները,

գ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բերդաշեն համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Համբարձում Ախցխեցյանի լիազորությունները,

դ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բերդաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Նարինե Մարաբյանի և Արփինե Հովհաննիսյանի լիազորությունները,

ե. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բերդաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված՝ անդամներ Գայանե Նահապետյանի և Գրիգորի Զորօղլյանի լիազորությունները:

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Զարիշատի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի.

ա. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված անդամ Նաիրա Մանուկյանի լիազորությունները,

բ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամներ Հուրիկ Մարտիրոսյանի և Հայկ Սարգսյանի լիազորությունները,

գ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զարիշատ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Համլետ Խորիկյանի լիազորությունները,

դ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Զարիշատի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Գոհար Բրուտյանի և Կարեն Սարգսյանի լիազորությունները,

ե. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Զարիշատի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Ամալյա Կայծակյանի և Անի Կայծակյանի լիազորությունները:

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Զորակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի.

ա. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված անդամ Մանուկ Մանուկյանի լիազորությունները,

բ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամներ Լեոնիդ Դավթյանի և Աննա Գյունաշյանի լիազորությունները,

գ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զորակերտ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Վարդան Չափանյանի լիազորությունները,

դ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Զորակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Իշխան Վարդանյանի և Նաիրա Մովսիսյանի լիազորությունները,

ե. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Զորակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Լուսինե Գրիգորյանի և Արաքսի Իրիցյանի լիազորությունները:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բերդաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Զարիշատի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Զորակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միացյալ խորհրդի անվանական կազմը 3 տարի ժամկետով՝ համաձայն հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի հունիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բերդաշենի միջնակարգ դպրոց»

պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N 51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 193-Ա որոշումը:

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Զորակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 234-Ա որոշումը:

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Զարիշատի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N 51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 268-Ա որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2022 թվականի մայիսի «20» N265 - Ա որոշման

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԲԵՐԴԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԶԱՐԻՇԱՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԶՈՐԱԿԵՐՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՄԻԱՑՅԱԼ ԽՈՐՀՐԴԻ

1.	Ալբերտ Այվազյան Արթուր Ափրիկյան	Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից առաջադրված,
2.	Սերգեյ Տոնոյան Էմմա Բարսեղյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բերդաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության.

1)	Էդուարդ Ախցխեցյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված՝ Հայաստանի Հանրապետության Ամասիա համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
2)	Անահիտ Մարտիրոսյան Հերմինե Հովհաննիսյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բերդաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
3)	Նելի Գալստյան Լուսինե Ախցխեցյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բերդաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված,

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Զարիշատի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության.

1)	Արտավազդ Ղուկասյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված՝ Հայաստանի Հանրապետության Ամասիա համայնքի ղեկավարի ներկայացմամբ,

2)	Գոհար Բրուտյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Զարիշատի հիմնական միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
3)	Ամալյա Կայծակյան Էմմա Հովհաննիսյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Զարիշատի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված,

5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Զորակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության.

1)	Ջեմմա Հարությունյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված՝ Հայաստանի Հանրապետության Ամասիա համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
2)	Արփինե Հովհաննիսյան Կարեն Ախցխեցյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Զորակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
3)	Արմենուհի Մկրտչյան Եկրամիտ Կակոսյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Զորակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է